



587

L. I. 4





ՄԵԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԿՈՒՏ

Մարդկային պատմութեան մինչև մեր օրերու շրջանին մէջ, տասնը իններորդ դարը պիտի մնայ ապահովաբար է՛ն բազմամասը ու է՛ն յատկանշանականը: Ապագայի պատմաբանը որ պիտի ուզէ թափանցել անոր հոգիին խորը ու սեղմնը անոր նիւթական ու բարոյական կեանքին տարրերը, ապշած պիտի վարանի է՛ն անհաւատալի երևոյթներուն առջեւ որոնք ոչ մէկ ատեն ունեցան այսքան հզօր զարգացում մը: Այդ դարը պիտի մնայ շուարեցնող բացառութիւն մը իր հակասութիւններով, իր ծայրայեղ ուղղութիւններով, իր մեծ մտահոգութիւններով, գեղեցկութեան հոյակապ իրականացումներով, ու միեւնոյն ատեն, բարոյական անկումի իր անհաւասարելի ուժովը: Կնճառս եւ միանգամայն ներդաշնակ այս շրջանին պիտի պարտինք մեր փառքը ու մեր ամօթը, որովհետեւ, հանճարի խոյացումներու եւ հրաշալի ստեղծումներու քով, մարդկութիւնը կը բարձրացնէ իր քայքայած գիտակցութիւնը ՈՏԻՐԻՆ տիրապետումին վրայ:

Կը յիշեմ Ռընանի մէկ խօսքը որ կը համառօտէ մեր ժամանակին ամբողջ յառաջգիմութիւնը. «Մտաւորական եւ գիտական կեանքին մէջ, մարդկային արարածը սկսած է Աստուած ըլլալ.» մեծ իմաստասէրը կը հասնէր յայտարարելու իր անդրդուելի հաւատքը իմացականութեան ապագային վրայ, ուսկից փոզովուրդները պիտի գտնային իրենց բարոյական փրկութիւնը: Անտարակոյս, նկատելով զարգացումի անսահման առաւելութիւնը զոր մեր շրջանը կըրցած է իրականացնել անցեալին վրայ, իրաւունք ունինք յուսալու է՛ն մեծ գեղեցկութիւնները մարդկային ճակատագրին համար: Բայց այսօր, ներկան շատ թանկագին է մեզի լռութիւնով անցնելու համար անոր վրայէն: Արգասաւորութեան պարարտ հիւթը զոր վերջին երկու սերունդները կը ժառանգեն նախորդներու հանճարէն, բերելով սքանչելի կանխահասութիւն մը, սուր եւ անհանդարտ՝ հիւսանդագին ըլլալու աստիճան, ստեղծած է գաղափարներու վերջնական յեղաշրջութիւնը որուն երբէք կարենային հասնիլ քանի մը հազուա-

գլուտ եւ ազնուական հոգիները հին ժամանակներուն: Գեղեցկութեան արեգակնեկ կը բարձրանան ամէն օր, մարդերուն մխիթարութեանը համար: Մտքի մեծ ուղղութիւններ, որոնք ծաւալելու համար իրենց ուժերը, պէտք ունէին տարիներու անսահման շրջանի մը, կիրաւորին քսան տարիներու ուշադիր երկտասարդութիւններէ, կը բազմապատկեն իրենց ազդեցութիւնը: Տեսէ՛ք արուեստին պատմութիւնը, գիտեցէ՛ք այն զագաթնակէտը ուր գրականութիւնը կը բարձրանայ, խորհելու համար թէ ըսուած է անոնց վերջին բառը, թէ մարդկային արարածը կըրցած է թափանցել հոգիին է՛ն նուրբ ծալքերուն մէջ, կըրցած է ապրիլ է՛ն վսեմ յուզումներով: Գիտեցէ՛ք այն կատարելութիւնը որուն կը ձգտի գիտութիւնը, գիտութիւնը մանաւանդ, վերջերս այգանուած փիմարներէ եւ պատուելիներէ, եւ որ սակայն այսօր կը կազմէ խորհողներու գերագոյն հաւատքը, կարող կըլլայ ստեղծելու իմաստասիրութիւն մը, կեանքի ըմբռնում մը, զգալու եղանակ մը:

Բայց մարդկութեան պատմութիւնը չամբողջանար իր գեղեցիկ կողմերով, ու մեզի կը մնայ տեսնելու, այդ մխիթարող հաստատութիւններէն ետքը, ուրիշ աշխարհ մը, աւելի զօրաւոր, աւելի վրդովուած: Որքան մտաւորական սքանչելի կեանքը մեզի կը զօրացնէ խանդավառութիւնով եւ հաւատքով, մեզի կը հպարտացնէ մարդ ըլլալուս, նոյնքան այս միւս աշխարհը գարշանքով պիտի լեցնէ մեր հոգին, պիտի թունաւորէ մեր գոյութիւնը, պիտի ստեղծէ ըմբոստացումը: Ապականութեան եւ ասելութիւններու աշխարհն է ատիկա որ կը զարգանայ, ահաբեկիչ ներդաշնակութիւնով մը, յառաջգիմութեան գեղեցիկ շարժումին քովն իսկ: Ու այս գիտութիւնը որ կըրցաւ բերել յեղաշրջող անսահման ուժ մը, այս արւեստները որ կը պարունակեն իրենց մէջ բարոյական դաստիարակութեան գերազանց տարրերը, կը մնան միմիայն փոքրամասնութեան մը առանձնաշնորհումը եւ անկարող կըլլան հասցնելու իրենց լոյսը ընկերային բոլոր խաւերուն: Գաղափարը կատանձնանայ ընտրուած իմացականութիւններու մէջ, անմատչելի՝ ամբօխներու հոգիին:

Այս շրջանը պէտք էր ըլլար՝ արդարու-

թեան դարը, ճշմարտութեան դարը: Բայց արդարութիւնը նախատուած է, ճշմարտութիւնը բռնաբարուած: Եւ երբէք, ո՛չ մէկ փամանակ եւ ո՛չ մէկ տեղ, մարդկային ընկերութիւնը կարող չեղաւ հասնելու այս աստիճան անբարոյականութեան, այսքան անարժանութեան: Ու քանի կը յառաջանանք, այնքան աւելի կը չեչտուի անկումը, այնքան աւելի կ'արմատանայ ստրկութիւնը: Կիրքերու կատաղութեան մէջ, յետին խղճահարութիւնը կը մեռնի: Եղբայրասպան ստեղծութիւնը կառաջնորդէ մարդիկը բղքոնելու իրենց նմանները. դաւաճանելու աւելի տկարներու դէմ, նենգամտօրէն խոնարհելու աւելի հզօրներուն առջև: Կեանքի պայքարը կը սաստկանայ ընկերութեան այս ոճրագործ կազմակերպութեան մէջ ու չը ճղմուելու համար, պէտք է խաբել, պէտք է մատնել, պէտք է սպաննել: Անասնական ախորժակներու գոհացումին համար, պէտք է որ Մահը տիրէ: Պէտք է որ ալեւոր ծերունիներ անօթութենէ մեռնին լքուած խրճիթներու մէջ, պէտք է որ երկտասարդ աղջիկներ իրենց մարմինը ծախեն պատառ մը հացի համար, պէտք է որ մայրերու կաթը ցամքի: Ծղմուած գոյութիւններու խուլ անէծքը չը դողացնէր բռնաւորին սիրտը, բայց թշուաօք որ դիչերուան մթութեան մէջ իր զանակը կը մխէ անցորդին կուրծքին, առաջուրնէ արդարացած է . . . :

Հին դարերէն մինչև նորագոյն փամանակները, իմաստասէրներ եկած են քարոզելու համար մարդկային էակներու հաւասարութիւնը, յորդորած են զիրար սիրելու, զիրար հանդուրժելու: Բարձր իմացականութիւններ հռչակած են ապրելու իրաւունքը, անբռնաբարելի ազատութեան սկզբունքները: Արիւնոտ յեղափոխութիւններ նուիրագործած են զանոնք: Եւ սակայն, տակաւին աշխարհը բաժնուած է սահմանազուխներու: Տակաւին գոյութիւն ունին կառավարութիւններ՝ գրգռելու համար ժողովուրդները եւ խեղդելու համար եղբայրութեան զգացումը: Միշտ մահուան գործն է որ յառաջ կերթայ, միշտ աւելի ճարպիկութիւնով: Բննեցէ՛ք Եւրոպայի վերջին տարիներու պատմութիւնը: Այս Եւրոպան որ ինքզինքը լոյսի որբանը կը հռչակէ, ուր կապրին աշխարհի մեծագոյն մարդիկը, ուր կը ծաղկին գերագոյն

գեղեցկութիւնները, թողուց որ Սպանիան ծծէ անպատիժ՝ 425,000 Քուպայիներու արիւնը, լրիկ մնջիկ, անհունապէս աւելի վարպետութիւնով քան թուրք կառավարութիւնը: Դեռ երեկ, Իտալիոյ մէջ, զօրալարներ գընտակներով եւ ուռմբերով կը պատասխանէին սոված ժողովուրդի մը որ հաց կը խնդրէր չը մեռնելու համար: Ու այսպէս ամէն տեղ, ուժը իրաւունքին տեղը բռնելով, արդարութիւնը ոտքի տակ առնուած եւ անդամութիւնը տիրելով խիղճերուն մէջ:

Եւ ժողովուրդները կը քնանան խորունկ թմբոթիւնով մը, կոյր՝ իրենց մահերուն, ձգելով որ բռնաւորները բարձրանան, բարձրանան: Անտարբեր կը մնան իրենց անօգուտ մարտիրոսութիւններուն: Չեն ուզեր, չեն կըրնար բանալ իրենց աչքերը՝ տեսնելու համար զահալէժը ուր կառաջնորդուին, եւ իրենց անասնացումը խոնարհեցնել կուտայ զիրենք արիւնարբու իշխաններու առջև:

Կը հալածեն անոնք որ իրենց բարիքը կուզեն եւ իրենց խաւարով շինուած հողին չը կրնար բարձրանալ մինչև ճշմարտութիւնը: Տեսանք ամբոխներ, վճռական վայրկեաններու մէջ, պատկներ հիւսելով իրենց զահիճներուն գլուխին, մահուան մոլեղին աղաղակներ արձակելով իրենց բարերարներուն դէմ:

Իսկ յեղափոխութիւնները: — Յեղափոխութիւնները պայթեցան դարերու ընթացքին մէջ, բայց ամուլ, ըլլալով բնագրական կիրքերու խաղը, ըլլալով արիւնի ծարաւով զինուլցած ամբոխներու վրէժը: Անոնք շարժեցան անսալով իրենց անմիջական պէտքերուն, իրենց բնածին ազնուութեան կամ բռնածին չարութեան: Ընկերական հին կազմակերպութիւնը չը խախտեցու ամենապզտիկ քայլ մը անդին, սնանեցաւ նահատակներու դիակներովը, աւելի արմատացաւ եղբայրասպան ստեղծութեան մէջ:

Անիշխանութիւնն ալ իր ուռմբերով, մոլեռանդ ընդվզողներու զանակի հարուածները, զուրկ ամեն ողջմտութենէ, պիտի վերիպին իրենց գեղեցիկ նպատակէն, պիտի մնան գատապարտելի յիմարութիւններ:

Ո՞ն՞ դճ եւ ցաւազին ամբոխներ: Պիտի գայ սակայն օր մը, ուր տգիտութեան, անասնացումի ու կիրքերու ծոցէն պիտի բարձ-

բանայ վերջապէս խոչալին գիտակցութիւնը ու մեզի աւետէ ապագայի աշխարհներ՝ լեցւած միմիայն՝ սիրավառ եղբայրութիւններու գորովովը: Որովհետեւ, հակառակ բոլոր հակասութիւններուն, հակառակ բոլոր նեխումներուն, Գաղափարը չը մեռնիր, եւ ո՛չ մէկ բռնութիւն կարող պիտի ըլլայ ջնջելու մեր խանդավառ հաւատքը: Ուշ կամ կանուխ. պէտք է որ արգարութիւնը տիրապետէ, ու եթէ նոյն խիստ պատրանք մը ըլլայ այս մտածումը, գէթ պիտի պարգևէ մեզի՝ զօրաւոր ատելութիւններու միտքարութիւնը: Չերժ մնալ վհատութեան անկումներէն, ապրելու նպատակ մը ստեղծել՝ լեցուելով մարդկութեան չարչարանքներու կրօնքովը, սպասել՝ հակառակ բոլոր յուսահատութիւններուն, յուսալ՝ հակառակ բոլոր չը վարձատրուած խանդավառութիւններուն, ու պիտի ունենանք գերագոյն երջանկութիւնը անմեղաբերելի խիզճերու:

Ահա առիկ այս դարը, չարիքով ու մոլութիւնով լեցուն: Պէտք է որ ճանչնանք դանի . պէտք է ունենանք ուժով ըմբռնումը անոր ստախոս քաղաքակրթութեան, անոր հսկայ ունայնութիւններուն: Պէտք է գիտնանք հաշիւի առնել վատութիւնը եւ խորամանկութիւնը: Հեռու պատրոզ միամտութիւնէն, ջանանք փնտռել զազափարը՝ բնազդումին տեղ գիտակցութիւնը՝ կոյր հառաօքին տեղ: Այն ատեն, մեր տառապանքները՝ որոնց պատասխանատուութիւնը կը ծանրանայ այնքան մեր ներքին անկարողութիւններուն որքան թագակիր զբլուխներու վրայ եւ զորս մեր պարտքը պիտի ըլլար երեւան հանել մեր հայրենասիրական մտահոգութիւններուն մէջ, պիտի չանցնին առանց արծարծելու գեղեցիկ եռանդներ: Եթէ չնայող կառավարութիւններու չնորհով, չը կրցինք իրականացնել երազուած նպատակներ, մեր արիւնի հեղեղները պիտի պտորաստեն սակայն, ցաւերուն եւ արցունքներուն մէջ, արգասաւոր հողեր ուր պիտի բարձրանայ հայկական հողին, աւելի ազնիւ ու իմաստուն: Ստեղծելու համար գիտակից ըմբոստացումի այդ շքերջանը, այս թերթը պիտի բերէ անձնուէր եւ իրաւասարդներու նպաստը անչափանդրօրէն, անկեղծօրէն:

ԼԵՒՈՆ ԱՐՍԷՆԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Փ Ր Կ Ի Չ Ն Ե Ր

— «Միանանք ու փրկենք...»:

Միօրինակ յանկերգն է ասիկայ, դեռ միացող վրատակներու վրայ սկսած ազեղ, անվերջ, մոլեգին պարին վայրագ ամբոխի մը կեղծ հերոսներու որոնք չի պիտի կրնային հանգիստ չնչել ամբողջ օր մը առանց ընկճուած ազգեր փրկելու ու հայրենիքներ «վերականգնելու»:

— «Միանանք ու փրկենք...»:

Ազգային մեծ հարցն է ասիկայ ատենէ մը ի վեր: Ու թերեւս չեղաւ խնդիր մը որ մաքի՝ այնչափ անբաւականութեամբ ու յաճախ ամօթալի աղքատութեամբ յուզուած՝ այնչափ մեղան ու թուղթ սպառէր ու այնչափ ստուար ծաղրելիութիւններ երեւան բերէր:

Չեմ գիտեր երբ սկսաւ աս. մեր ո՞ր գուհիկ ու տիրացու թարթառէնը — ու ասոնք կը վխտան մեր մէջ — առաջին անգամ ունեցաւ այդ հանճարի զազափարը: Սա գիտեմ որ այսօր նորկալի հառաչներու, զարհուրելի շնորհալիութիւններու, նեղացուցիչ փղձկումներու, անակնկալ դիւցազնական կոչերու ամբողջ գրականութիւն մը ունինք ուրկից քերականութիւնը խաբառ վտարուած է, եւ ուր յաւակնոտ ու արգահատելիօրէն ձեռքիս մտքեր չորս բառը անգամ մը կը կրկնեն:

— «Միանանք ու փրկենք...»:

Անոնք են մեր փրկիչները: Ու եթէ դեռ չփրկուեցաք, սպասեցէք որ «միանան» մէջ մը:



Ստաւել կամ նուազ յեղափոխական անցեալ մը ունեցող նախկին խոհարարներ կամ — ինչ որ շատ տարբեր բան չնշանակեր — նախակրթարանի վարժապետներ են մեծ մասամբ, ամենքն ալ կատաղօրէն հայրենասէր, ու միայն հայրենասէր: Սխալ, պօտոս ու անբխանքալ հայրենասիրութիւն մը, առանց որուն կարծես թէ այդ ողորմելիները կըզգան գոյու-

թեան իրաւունք չունենալին: Գոնէ համետ ու աննշան — մանաւանդ աննշան — հայրենասէրներ ըլլալով բաւականանային, բայց չէ՛, այդ նախկին խոհարարները մտքի մարդու հովեր կառնեն կոր, այդ նախակրթարանի կառավարիչները գրական անարդարանալի յաւակնութիւններ կը հրապարակեն կոր, ատենէ մը ի վեր անտանելի փութկոտութեամբ մը մեզի հրամայեն իրենց . . . հայրենասիրական արձակը:

Ինչ որ ամենէ աւելի մեզ կը ջղազրգոյն, բացարձակ բացակայութիւնն է նոյնիսկ էական, արամբանական ու հարկաւոր շղթայումի մը իրենց խօսքերուն մէջ: Հակառակ իրենց բուն հաւատացողներ ու համոզուածներ ըլլալուն, ու բոլոր այն միամիտ, դառնացած ու հանդիսաւոր ձեւ՝ բուն որ կառնեն, այդ մարդիկը բան մը չունին ըսելիք, ու կը զըրենն գրած ըլլալու համար միայն, հազար անգամ ըսուած, ծթած պայմանադրական նախադատութիւններ ծմբկելով ու լա Բալիսի փառաւոր ճշմարտութիւններ կրկնելով:

Այս եղականօրէն տափակ ու վճռամոլ ախպարներուն՝ որոնց համար ազգի մը փրկութիւնը չորս սիրացուի «միութեան» խնդիր մըն է միայն, համագրական նմոյշը չէ՞ Յ. Ծանկիւլեանը:

* *

Տարի մը առաջ Բարիդ իրիկուն մը (մի շուարիք կաղաչեմ այս անակնկալ շեղումէն, վէպ մը չէ որ կը սկսիմ) Ա. Չօպանեանի սենեակը հանգիստ քանարէի մը վրայ երկնցած մտիկ կրնէի վերհարընի մէկ հոյակապ քերթւածին զոր իմ խանդավառ բարեկամս կը կարգար իր աղուոր հնչական ձայնին հմայքովը օրօրելով զիս:

Այդ գեղեցկագիտական վայելքի յուզւած ու հեշտական պահուն երբ սիկառէթիս կապոյտ ծուխին հետ իմ մէջէս բանի մը բարձրանալը, անօսրանալը, հեռանալն ու յախտնանալը կը դիտէի . . . յանկարծ ահաւոր աղմուկով մը բացուեցաւ սենեակին դուռը.

— Ծանկիւլեանն էր որ բարկածայթ եւ ահարկու կը ցցուէր սեմին վրայ: Առաւել քան երբէք յաղթական ու հոյակապ, սենեակէն ներս կը հրէր պանդուկին սպասաւորը, ու ծամա-

ծուութեամբ մը որ իր գէմքին անհամար խոռոչները կը բազմապատկէր, ու եղունի կայծ մը կը գնէր իր մարած աչքերուն մէջ, կը դոռար.

— Բապո՛ւճս, Արչակ, բապո՛ւճս . . . ո՞ւր է բապոճս . . . ըսէ՛ սա կարսօսին, պէ՛ ախպար . . . գողցե՞ր է, ի՞նչ է ըրեր . . . բա՛ . . . պո՛ւճս . . .

(Պէտք է այս արդարութիւնը ընենք իրեն անցողակի, Ա. Չօպանեանն՝ այսօր արդէն քընարերգական խոյանքներու հասած՝ «իբ հայրենասիրութեան» թերեւ է՛ն պերճախօս ապացոյցը կուտար, այդ միջոցին, ամեն տեսակ փութկոտ ու անձնուէր խնամքներով շրջապատելով այդ տխուր պարտնը):

Սահմրկած կը նայէի իրեն: Այլ չէր պոռար, ու դառնացած կերպարանքով մը սպասաւորին կը նայէր որ, ինքն ալ, սարսափած ինչ ըսելը չէր գիտեր:

Անոր ամբողջ անձէն խորտակումի, խըլեակի տալաւորութիւն մը արտմութեամբ կը լեցընէր սիրտս: Բայց այդ վայրկեանին, այդ մարդկային աւերակին առջեւ ակամայ պոռթկացող ինդուքս չկրցայ բռնել ու սենեակէն դուրս նետեցի ինքզինքս, թողլով քաջասիրտ բարեկամս շարունակել իր մարդասիրական վեհանձն գերը:

Մխթէս երբէք չի պիտի ելլայ սակայն տոգոյն, սպառած, ցաւազին էակը ու անոր աչքերուն պարապ ու ահաւոր սեւեռումը:

Հետեւեալ օրը, չը մոռնամ ըսելու, անպատկառ բապոճը գտնուեցաւ հերոսին անկողինին տակէն:

* *

Այն ատենները Եղիստոսի նախկին նախարարապետ Նուպար բաշա, յիշեցնելով յանկարծ մեզի իր հայ մը ըլլալը իշխանական առատածեռութեամբ մը սկսեք էր շահագրգռել մեր ազգային ամեն կտորի հարցերով: Ու ամբողջ սողանցնում մըն էր՝ փառքով ծանրացած՝ անցեալ ներկայ ու ապագայ հերոսներու որուն հանդիսատես եղաւ ծերունի բարերարը իր Եանգի՛լգի ապարանքին մէջ:

Ծանկիւլեանէն աւելի աննշաններ արդէն արժանացած էին այդ պատուին, բայց անոնցմէ ոչ մէկը կրցած էր անոր չտի վսեմ

ըլլալ իր քաջագործութեանց պատմութեանը մէջ:

— Ի՞նչ էր նպատակնիդ կը հարցունէ (Թրքերէն լեզուով) նուպար բաշա Գումգարուի հերոսին դառնալով:

— Աշըքեանը ստիպել որ անմիջապէս ինծի ընկերացած Ելտըզի պալատը գար ու զիս Սուլթանին առջև հանէր . . . :

Այս պատասխանին—այնքան խրոխտ լըրջութեամբ ու խորունկ համոզումի շեշտով մը ըսւած— ծերունի քաղաքագէտը ինքիբմէն ելած՝

— Ի՞նչ պիտի ընէիք, եթէ այդպէս ըլլար կըսէ, ծանր ցուրտ ու պրտում ձայնով մը:

Անիմաստ ու մանկական այդ հարցումին հազիւ կրնալով բռնել իր հերոսական ծիծաղը ու արհամարանքի անպատում նայւածքով մը ձանկիւլեան՝

— Էֆէնէիս, պիտի նուրբ սեօյիեհէյիսիս . . .

Բա՛ն առ բա՛ն:

Ալ մեկնութեան պէտք չունիք կարծեմ:



Այս անմոռանալի, այս հակայական խօսքը յիշեցի անցեալները յօդուած մը կարդալով իրմէ թերթի մը մէջ, որուն անունը միայն — կը գուշակէք — երջանիկ ըրած ըլլալու է զինքը:

Այդ յօդուածը ԿՈՉ մըն էր առաքելական շունչով մը գրուած եւ ուր ձանկիւլեան կը յայտնուի իբր մեծ երգեծարան մը որուն միայն պիտի համարձակէինք բաղտապել, տարբեր ուղղութեան մը մէջ՝ բայց հաւասարապէս անգիմադրելի՝ Գուրեանի անմահ կենսագիր Էքսէրճեանը: Երկուքն ալ՝ անկորէն լուրջ՝ անգիտակից հանձարներ, դասական ըլլալու սահմանուած:

Այդ այնչափ — մանսուանդ գրական ու քերականական — տեսակէտներով անգնահատելի յօդուածէն քանի հատուած հոս յիշել խղճի պարտք մը կը համարեմ:

Այդ պատմական յիշատակարանը կը սկսի սապէս.

«Վերջի տոններս ուղղակի իմ անձիս դէմ կարգ մը դաւաղութիւններ կը լինին, անկեղծ, ազնիւ մտքեր կը խեղաթիւրուին եւ

շուրեր կը պիտոնուին ձուկ որսալու նպատակաւ»:

Ի՞նչպէս լաւ ըմբռնած է նպատակը ու ի՞նչ աւետարանական քաղցրութիւն մը այդ նկարագիւղ ու խորունկ տողերուն մէջ:

Ուրիշ գոհար մը այդ «պրոտը ջուրերուն» մէջէն .

Կարգ մը աղօթքներ դաւաղութիւն ըրին անձիս դէմ (հոս սակայն չբէր թէ ուղղակի՞) քանի որ վերջէն խայտառակուցան իրենց այդ դաւաղութիւններով, հարկ չեմ տեսներ աղնիւ ընթերցողները զբաղեցնել այդ աղօթք խօսքերով եւ ի վերջոյ կեղբակացնեն թէ (ո՞վ, արդեօք մե՞նք) քանի որ դաշնակցական ընկերներու հետ յարաբերութիւն կրնեմ եւ կը տեսնուիմ անպայման կերպով դաշնակցական եղած եմ»:

Մեծ երգիծարանը մարտիրոսներու վերայ խօսելով՝

«Անոնց ոսկորներ հողերու տակէն թէ բացօրեայ վրէ՛ժ, վրէ՛ժ կը պոռան»:

Այո՛, հողերու տակէն թէ բացօթեայ:

Գալով իր սկզբունքնորուն առ ի չգոյէ ուրիշ բառի, ահաւասիկ.

«Նպատակի մը հասնելու համար սեր անհրաժեշտ է, սէրը յառաջ պիտի բերէ միտքիս, միութիւնը պիտի գոյացնէ զօրութիւնը, զօրութեամբ պիտի յաղթենք մեր թշնամոյն, յաղթանակով է որ ձեռք պիտի բերենք ազատութիւնը ազատութիւնով պիտի հասնինք մեր նպատակին . . . »:

Հապա նպատակնուս հասնելնէ՞ս ետքը, եւ անկէ՞ ետքը: Ստչափով գոհ կարելի՞ է ըլլալ. մանսուանդ ինչպէ՞ս կարելի է «ազատութիւնով» միայն գոհ ըլլալ առանց «մեր նպատակին հասնելու»: Բայց չենք մեղադրեր քեզ ո՞վ ձանկիւլեան, ով գիտէ ինչն էր կը լուս այդ անողոք կէտերուդ մէջ:

Իր «հակառակ-տակութիւնները» .

«Մենք նոր կուսակցութիւն ստեղծելու երբէք մտադիր չենք եւ ստեղծողին ալ այնչափ հակառակ ենք եւ կատենք որչափ հակառակ ենք եւ կասեմք մեր թշնամին»:

Իր իմաստասիրութիւնը.

«Գուսակցամոլութենէն է որ յառաջ կուգայ «ես»ը եւ «փառք» . . . »:

Իր քերականութիւնը.

«Հնչակ թերթ որ երեք ամիս անգամ մը կը

հրատարակուէր 30 ոսկի զրկեցինք ժընեղ ուրով սկսեց ամիսն անգամ մը հրատարակուիլ»:

Ու այսպէս հետզհետէ տաքցած ու քրտնաթոր կը շարունակէ հեւալով՝

«Եթէ իբր հայ ժողովուրդի զաւակ կ'ուզենք իբր հայ մեր պարտականութիւնը կատարել, որ ունինք առ Ազգն եւ հայրենիք, եթէ կուզենք մեր եղբայրներու թշուառութեան վերջ տալ, եթէ կուզենք մերկ ու նոթի մայրերնուս ու քոյրերնուս արտասուքները դադրեցնել եւ եթէ կուզենք մեր դարաւոր ստրկութեան շրջութան փշրել եւ իբր մարդ իրաւունքնիս ձեռք բերելով ազատ ապրիլ, պէտք է ամեն զոհողութիւններ ընենք, պէտք է թողունք կիրքեր եւ «ես»եր, օր առաջ ձեռք կարկառենք իրարու եւ անկեղծութեամբ ըսենք. «եղբայր ենք մենք», որպէսզի պատմութիւնը մեզ համար գրէ «Հայ ծնանք ու հայ մեռանք», որովհետեւ ամեն ինչ մեր միանալէն կախում ունի, եթէ մենք աշխատինք միութեան գաղափարը ընդհանրացնել՝ թիւերնիս ստուարացնել, այն ատեն այն բոլոր «ես»ասէր, փառասէր եւ բախտախնդիր ազատ պարոնները ինքնին կը քաշւին սասպարէզէն» . . .

* *

Խեղճ լըմնցած մարդ, խեղճ բարի ցաւադար, խեղճ, տխուր եղբայրս, կը մեղքնամ քեզի բոլոր գութովս զոր ունիմ ինկած, կոտորած կեանքերուն համար: Կը մեղքնամ քեզի տառապանքի տարիներուն համար որ սպառեցինք իսկանդոտ երիտասարդութիւնդ ու ազ ահաւոր փոսերը գէմբիդ՝ ազ անհուն անշարժ, անբարբառ նայուածքը տուին աչքերուդ: Կը մեղքնամ քեզի մանաւանդ անոր համար որ զուն գոնէ անկեղծ մը եղար. . . քանի որ չի պիտի կրնայիր այդչափ ապուշ ու ծաղրելի ըլլալ առանց անկեղծութեան:

Կը մեղքնամ քեզի ու կը խոնարհիմ ցաւիւ պ առջեւ որովհետեւ հիւանդ ես դուն:

Պիտի ուզէի որ հասնէր քեզի ու սրտիդ խօսէր իմ եղբայրական ձայնս, — եկո՛ւր, վազ անցիր սա փրկիչի վսեմ դերէդ: Մեղք ես, յոգնած ես, հիւանդ ես դուն: Հեռուներէն կուգաս կոր ու սխալ ձամբաներուն մէջ շուարեր ես: Կանգ առ ալ, սովորոյն ուխտաւոր ախմար ցնորքին:

Հատէ՛ սրտեդ, խմէ՛ մոռացումի ու խաղաղութեան բաժակը զոր քեզի կերկնցնեմ, հոս թող հանդուանդ ըլլայ ու ալ ետիդ մի նայիր: Չարչարուած, զառամած գլուխդ ալ թող հանդչի: Գոցէ՛ այդ անձկութեան աչքերդ, խենդեցնող ու պարապ աչքերդ: Գնացի՛ր: Վաղ առտուն պայծառ պիտի ըլլայ, ու եթէ հետապնդող յիշատակներ գան վրդովել զայն, մի՛ տրտմիր: Մտածէ որ դիւցազնական եղար վայրկեան մը: Միտքդ բեր հսկայ երազը զոր յղացար՝ Հայոց պատրիարքէն՝ առաջնորդուած՝ երթալու, ձառ մը կարգալու Սուլթանին առջեւ, ու լռեցուր խղճի խայթը զայն կարդացած չըլլալուդ, այն ձառը, որ ազդ մը պիտի փրկէր:

Բայց թերեւս հիմա կը յիշես որ կարգացիր զայն արգէն: Աւելի աղէկ: Ուրեմն քեզի մնացած օրերդ ա՛լ փառքի զինովութեան օրեր թող ըլլան ու երբեմն երբ շատ յուզուիս մտածումէն թէ ո՛րչափ մեծ եղար, երանի՛ քեզի, դուն պիտի ճանչնաս քաղցրութիւնը խանդաղատանքի հանդարտ արցունքներուն . . .

* *

Բայց վեհանձն փրկիչները միշտ կը շարունակեն իրենց խուլ յանկերգը:

—«Միանանք ու փրկենք . . .»:

Փրկեցէք, օ՛հ, փրկեցէք զմեզ . . . ձենէ:

ՍՈՒՐԵՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՕՄԻՔԻ

Կը սիրե՛մ ազգս: Գեղեցիկ կնոջ մը պէս չէ որ կերեւայ ինձի շքուած ու խրոխտ, որուն կը վազեն ամէն ակնարկներ, որուն շուրջը կը բոլորին քծնորդներ, որուն ամէն մէկ քայլը շուկ կը հանէ եւ որ զրկանքն ու նեղութիւնը չէ ճանչցած: Չէ՛, իմ աչքիս կը պատկերանայ անիկա համեստ կին մը՝ որուն սիրտը մունջխեղդ ցաւերու հնոց մըն է, որուն կեանքը տառապանքներու թափօր մէն է, բայց արի հոգին չը կքիր աղէտներէն, որուն ցած ու խղուկ ձեղունը երազներու թեւով կը վե-

լանայ վրայէն, եւ որուն զաւակը իր ժրուածութեան անլուր ջանքերով միջոց կը ստանայ զարգանալու եւ բարեօր ապագայի մը տիրանալու:

Սպասելով այդ ապագային՝ հեռաւոր անցեալի յիշատակներ էին որ զինքը կը հովհարէին ու հիմա այդ ալ չէ մնացած իրեն: Քանիներո՞ւ աչքերը չեն լեցուցած ոգեւորութեան այրող արցունքներ երբ դպրոցին դուրսեղաններուն վրայ կը տրուէր կարգալի բնոց Արամներու Արտաշէսներու ու Տիգրաններու սխրագործութիւնները եւ քանիներո՞ւ հոգին չէ վառուած անոնց փառքը ողջնցնելու գինովցնող երազովը:

Հիմա քննութիւնը եւ ուսումնական հետախուզութիւնը այս մխիթարութեան վրայ ալ արգիլելէ ձեռք դրին: Եւ ո՞վ կայ այսօր համոզուելէ չիտուող՝ որ կարող ըլլայ ուրանալ թէ մենք մեծ ազգ մը չենք եղած, պատմութեան մեծագործ ազգաց համարին մէջ չենք կրնար մտնել, թէ մեզի յատուկ մեծ գրականութիւն, մեծ տրուեստ, մեծ քաղաքակրթութիւն չենք ունեցած, թէ փառք ու պարծանք ողբալի կերպով քիչ ենք ունեցած արձանագրելու եւ հակառակը՝ չառ:

Խոստովանինք քաջութեամբ թէ մեր փառքը մեր ետին չէ, մեր առաջն է, ու կըստպատէ որ սիրանանք անոր արիութեամբ, յարասեութեամբ, մանաւանդ գիտակցութեամբ ու մեթօտով:

Անցեալին մէջ մեր մեծագոյն փառքն է Վարդանանց կռիւը — կռիւ մը կրօնի սկզբունքի համար արդարեւ այն ժամանակուան տիրող սկզբունքը զոր դարեր յետոյ Եւրոպական մեծ ազգեր խզճի ազատութիւն անունով փառք համարեցին պաշտպանել իրենց կեանքի գնով, եւ մեր ամենէն հիմնալի մեծագործութիւնը՝ ապրիլ շարունակելիս:

Սպրիլ լոկ. — Ա՞յդ է ամէնը. ի՞նչ անհամութիւն. ազգերու շարքին մէջ տեւել մնալ պայմանով սակայն որ աննշանութենէ դուրս չելլուի: Քիչ մը անմտալարժ տղուն պէս որ կը շարունակէ դպրոցը գտնուիլ՝ չլռեստուելու չափ միայն յոյս ներշնչելով, մինչ ուրիշները կուգան, կը յառաջանան, կանցնին, կերթան: Ո՛չ, տուէք ինձի վե՛հ կեանք քան երկար, ինչպէս կըսէ Շէքսպիր: Թող զառամեալ ծերու-

թեան մը չի հասնիմ անկածութեան մէջ, թող վաղամեակի ըլլամ բայց լուսապսակով բոլորուած: Միթէ՛ դից ալ սիրելին չէ՞ մասսաղօրեայ մտնողը:

Ունայն բողոքներ որոնք կանգնատանայն մեծ խնդիրը որ կայ անհատներու եւ ազգերու կեանքի մէջ:

Անհատի համար մեծ ըլլալու առիթը հազիւ անգամ մը կը պատահի, իսկ ազգի մը համար որ կը շարունակէ սպրիլ գիտակցօրէն՝ անհուն եւ առիթները որոնք կրնան ներկայանալ: Պատրաստակամութեան վրայ է ամէնը:

Եւ յետոյ, կեանքի ամենօրեայ լռին մըցամարտին մէջ սպրիլը յաղթել է: Բուն կռիւն ու յաղթանակը ճակատող բանակներէն դուրս է: Պատերազմը չսկսած Ամերիկա արդէն յաղթողն էր ու Սպանիա՝ պարտեալը: Անընդհատ զարգացումը մէկը զբահած էր ամէն բողոքումի դէմ, եւ միւսին անփութութիւնն ու յանձնապատան յոխորտութիւնը դատապարտուած փշրուելու հօր մըցակցին առջև:

Ուժեղն է որ պիտի սպրի, այսինքն աշխատողը, ճարտարը, գեղեցիկը, արտայայտիչը, արտադրողը:

Պէտք է որ մենք ալ գիտակցութիւնը ունենանք այն ուժին որով իբր ցեղ 3500 տարիներէ հետէ կրցեր եւք սպրիլ: Եւ ի՞նչ հողի վրայ:

Որչափ աւելի ըլլայ կռուողներու թիւը ու որչափ աննպաստ ըլլան դիմողութեան պայմանները այնքան աւելի մեծ է արժանիքը սպրողին:

Բոյսի մը համար սպրիլ պարտէզի մը հանգիստ սահմանին մէջ հեշտ է բարդասամար ճիղին որ ստիպուած էր ընկել եթէ դատապարտուած ըլլար սպրելու սրեւազարձային տնտարի մը վայրագ ու համայնածախ բուսակոնսութեան մէջ:

Հոն ուր մարտն անողորմ է ու կռիւը գիրկընդխառն, հո՛ն սպրիլը առաքինութիւն մըն է:

Ն Ա Հ Ա Պ Ե Տ

ԱՆՀԵՏԱՅԱԾ ՏԻՊԱՐՆԵՐ

ԳԱԻԱՌԱՅԻ ՇՈՎԱՐՏԱՆ

Քսան տարի առաջ:

Այն ատեն՝ երբ դեռ սատանաները կը քնանային, երբ լուս ելած ատեն մահկանացուներու մեծագոյն մասը զբաղած էր ջուրը տանելով այն երանելի անասունը, որ անգամ մը, բացառաբար, ասուն եղաւ, աստուածաշնչական ըմբոստացումի մը մէջ, եւ որուն վրայ մեր Տէրը նստաւ: Այն ատեն երբ երկինքը երկրին այնչափ մօտ էր որչափ այսօր հեռու է անկէ. տակաւին այն ատեն զաւառի խաղաղ մթնոլորտին ու նեղկուճուկ հորիզոնին մէջ կապէր Հօլարտան:

Հօլարտա՞: — Ահա բառ մը, հագուստը այն հ ն տիպարին, որուն հետ այնչափ քիչ նմանութիւն ունի այսօրուան հօլարտան: Զպիտի խօսիմ այն տարբերութիւններուն վերայ որոնք կան այս երկուքին մէջ: Դեռ այսօր կը տեսնեմ զինքը, հինը: Յիսունէն ետ թանասունին մէջտեղերն է. կաթը վաթած փսիկի վերապահում մը կայ իր ամբողջ կերպերուն մէջ: Միայն թէ եթէ հետաքրքիր ըլլաք իրեն պատմել տալու անցեալի կեանքէն, պիտի տեսնէք որ կաթը վաթած փսիկին մէջ իրաւ ախառները կտարած առիւծ մը կայ, այսօր պզտիկցած, պզտիկցած, կատուի մը չափ միայն մնացած:

Իր դէմքին թահ, լայն ու հանդարտ գծագրութեանը մէջ հին մեծարտութիւններ ու մարած փառասիրութիւններ կը կնճռանան ու կը պատմեն անցեալ մը ամբողջապէս ապրուած կեանքի:

Ես զինքը այդ անցեալին մէջ չը տեսայ, այլ պատմել տուի իրեն, ու կը հաւատամ իր ըսածներուն, ոչ անոր համար որ շատ շատ սուտ խօսիլը չսիրեր, այլ անոր համար որ այսօրուան իր դէմքին ամբողջ արտայայտութիւնը արդէն հզօրապէս կը շեշտէ իր անկեղծութիւնը: Ու երեւակայութեանս առջեւ կուգայ ինքը, իր երիտասարդութեանը մէջ կապոյտ չուխայէ փօրոռոտ, չեփկեկն նստեստետ, մետաքսէ թա-

րապուլուս գօտիով, թոյլ բայց կոկիկ փաթթուածքով մը, վրան գլուխը մաքուր, ամբողջութեանը մէջ մկանուտ ու ջղուտ, ծանրաբարոյ առուգութեամբ մը եւ լուրջ եռանդոտութեամբ մը:

Հօլարտան ալ իր իմաստասիրութիւնը ունի, եւ գուցէ ամենէն աւելի իմաստասիրութէն ունեցած է զայն: — Ի՞նչ է կեանքը. չէ՞ մի որ «եկանք ու կերթանք կոր, ինչ անինքնէ ան պըտը մնայ քովերնիս, պըտը մեռնինք, գառնուկս, պըտը մեռնինք»: Ասիկանիւթապաշտ ու հանդարտօրէն յոռետես ըմբռնումն է մարդու մը որ իր բնազդով կը տրամաբանէ: Ահաւասիկ ըմբռնում մը որուն վրայ կը բարձրանայ հօլարտաին ամբողջ կեանքը: Քանի որ «պըտը մեռնինք», քանի որ իրականութիւնը դրականօրէն այս դաշտերուն ու լեռներուն հորիզոնին մէջ եւ երկինքին սա կապոյտ ընդարձակութեանը տակ կը քաշքշուի, ինչո՞ւ կեանքը պէտք եղածին պէս չը վայելենք, ակուր վերապահումներով ու ցաւոտ նկատողութիւններով:

Հակառակ կեանքի այս հեթանոս ըմբռնումին, հօլարտան երբէք չէ դեղեւած իր հաւատքին մէջ, որուն համար իր մեռնելու արտամղողութեան անկեղծութեանը կը հաւատամ: Ասիկա ոչ անոր համար որ ճգնաւորի ու առաքեալի պարտականութիւններ իր մէջ զխաղցութեան ու կամքի ուժովը ամբացած ըլլային, այլ անոր համար որ ինքը պահպան շունն է իր խաչին ու իր եկեղեցիին: Բայց հօլարտան կը բարեխառնէ իր այս ասպետական կրօնասիրութիւնը տեսակ մը սկեպտականութեամբ, որուն մէջ երբեմն թերեւս ամպարիշտ երեւայ իր հոգին չճանչցողներուն:

— Զօրքին մեռնիմ, մրմնջեց օր մը հօլարտան, կըսին որ Աստու ըմար շատ բարի է, իր ծառաներուն գեշութիւնը չուզիր, Քրիստի կնիկս վէ երեք զաւկըներս մէկաց ամուսայ մը մէջ առաւ. մեղաւոր եմ, գիտեմ, Ֆրիսթ, մնղա՛յ Աստուծոյ, (սալթային օձիքը խածնելով) աս բանը ընկու չէր ինձի, իր բարութեանը չէր իյներ ինձի պէս ֆախիրի մը մեղքը երեսին տալ... »:

* * *

Եպիկուրեան մըն է հօլարտան, ու խղճմտորէն կը հետեւի «կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լեր» ին: Գինովութիւնը իր էական յատկանիշներէն մէկն է: Դրամը ջուրի պէս կը մսխէ ու չի տար անոր այն պաշտամունքը զոր ոսկին կընդունի մահկանացուներու հարիւրին իննսունը իննէն: Բայց մամոնայի մասին խանդավառումի այս պակասը (որ պիտի գայթակղեցնէր մեր վաճառականները) թերեւս կը բացատրուի անով որ ժամանակով դրամ չահելէն զիւրին բան չկար: Կը պատմեն թէ իմ մեծ պապս եօթանասուն զրուշի դրամագլխով մը զործի ձեռնարկեր է, այսուհանդերձ իր ժամանակին բարեկեցիկ իշխան մը, ամիրա մը նկատուէր է:

Հօլարտան շարժումի, ալեկոծութեան կեանքը սիրած է միշտ: Զուսին, ձմեթկան, կամ ամառուան պայծառ գիշերով, այն պահուն երբ լուսնկայէն ողողուած, աւանը ամբողջ աղամանդէ երազներու մէջ իր օրուան յոգնութիւնը կառնէ, անիկա միշտ դուրսերը գտնուած է, քաջագործութեան մը, կամ մոնաստիրի մը: Հօլարտան քիչ մը տածիկ է իր ընտանեկան կեանքի մասին ունեցած տրամադրութիւններուն մէջ: Իր կնկանը քիչ անգամ գլուխ ծած է, անոր հանդէպ ծայրայեղ առնականութիւն մը պահել ուզելով: Կնի՛կ. բա՛հ, կնիկը ի՞նչ է: Իր բարկութիւններուն մէջ հօլարտան անոր փոստիկն հանած է: Ասոր համար իր ընտանեկան կեանքը տրամաբեկ բան մը ունեցած է միշտ, կոխներու, գծտութիւններու, հակառակութիւններու ու խեղդուած դժբաղդութիւններու ախուր պատկերաշար մը:

Եւ սակայն կը հաւատեն թէ իր աչքերը ոչ մէկին կնկան մեղապարտ նայուածք մը արձակած են, ու իր գլխին մէջ ամպարիշտ խորհուրդ մը բնաւ բոյն չէ դրած: Իր համբաւը զիտցած է միշտ անաղարտ պահել: Իրաւ կը պատմուի թէ մարդ ալ զարկած ունի, մարդ ալ ծեծած ունի, կնկան մը ետեւէն ալ ինկած ունի, բայց ասոնց բոլորը ոչ թէ ուղղակի նպատակներ, այլ... միջոցներ եղած են միայն: Ուստի հօլարտան անբարոյական մարդու նախատինքը չընդունիր բնաւ: մեծանձն, արի եւ շատ անգամ ներդրամիտ եղած է իր թշնամիներուն հանդէպ, զա-

նոնք իր ափին մէջ ունենալէ յետոյ, անպատիժ՝ ազատ արձակելով:

* * *

Եւ ասոնք բոլորը մանրավէպերով կը պատմէ ան, իտակ, իտակ, ամէն անգամ որ հետաքրքիր ըլլաք զէպի իր անցեալ կեանքը: Իր պատմութեան մէջ տխուր չէտը կայ անձեռնունկի կեանքի մը կորուստին զիտակցութեան: «Ո՛ւր են ան ժամանակները, ո՛ւր են մանաւանդ ան ատենուան չորպաճիւնները. հիմակուան դարերը խանձխութեան դարեր են, մէկը մէկին կիւլէնմիջ չկրնար ըլլալ: Գլխիդ բան մը գայ, ձեռքէդ խաղա մը ելլէ նէ, ետքը նէ՛ հարցնող կըլլայ, նէ՛ փոտող. չորպաճի չունիք, աղա չունիք քի ինչ եղար տէյի հարցնեն: Կուգես նէ անխելքութիւն մը արէ, ետքը մարդը էշուն դրախտը նետին նէ, հարցնող, փոտող չը գտնուիր: Ա՛հ, մեր աւանը, հաճի Յակոբ չորպաճին կուգար, երկու շամար կը զարնէր, թող տալ կուտար հատի: Հիմա ո՛ւր փապուճս անանկ մարդ»: Խեղճ, պատուական մարդ որ իր խելապատակին մէջ չի կրնար սղմեցնել... օրուան ոգին, ու իր ակոսները թափած առիճի կատաղութեանը մէջ կը դատապարտէ ամէն բան:

* * *

Հիմա խելօք մը, թուստիկ մը ինքզինքը քաշած է. սմբած տիկ կը լմանի: Իր մէջ շատ բաներ փոխուած են: Դրամին յարգը հիմա ճանչնալ սկսած է: Եթէ տակաւին ինկած չէ՛ կաշխատի. հակառակ պարագային իր զաւակները կը նային զինքը: Այսօր իր ընտանեկան մթնոլորտը, իր ցածուկ երգը իրեն անուշ կուգան:

Կըզգամ թէ, իր վայրկեաններուն, այս հոգեփոխած մարդուն համար, անցեալին յիշատակները միակ մխիթարութիւնը կը մնան կորսուած կեանքի մը տրտում համակերպութեանը մէջ: Ու ծերացած հօլարտան զէպի քեզ երախտագիտութիւն մը կըզգայ այդ ըսուերոտած կեանքին անցած անուշութիւնները անզամ մըն ալ իրեն յիշեցուցած ըլլալուդ համար:

Զ Ա Մ Ֆ Ո Ւ Ն Ո Ր Թ Ե Ր

(Ա Ր Ձ Ա Կ Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ)

Յոգևած՝ ցաւերէն ետքը որովհետեւ ներսս կը
փայտայտեն, դիմա կը անոթիտեն, ու սառնաստեղծի
ստեղծ կը փետն աշտեռու շարքը, դեռ անոնց հե-
րիւնը զգարով մորթիս սակ ու սարսուռներուն
զնայցը ուխտներուս մեջ, Անիկա կը ժպտի ինծի:
Անիկա միայն այն աստեղ կը ժպտի, միայն
այն աստեղ կը զգացնէ ինծի իր գոյութիւնը երբ
չստ կը գաշարուիմ ցաւէն :

Դեռ սառնաստեղծ չնայցած, գիտնալ աշ-
տեղծ անցնալ: Ձեռ գիտեր ո՞ր օր ծնալ, բայց
հիմա Անոր գոյութիւնը զիս կը շրջապատէ: Ի՞նչ
մեջս կը զգալ զԱյն երբեմն, բայց շատ անգամ հե-
ռուն, շատ հեռուն . . . :

Հագիւն կը անցնալ գիտնալ, սփռութիւններէ
բերած ուղեղովս՝ Իր այցերը գիտուս մեջ սար-
սառ յիշատակ մը ձգած են, որ կերկնայ, կե-
րկնայ . . . :

Անպէս մագեր ունի, աստի պէս աշտեռ ու
դիմա շրջագիծը կը աստեղի սարսառի մը
վրայ :

Իր դիմաքն աւելի՞ իր ժպտները կը անց-
նալ զորս օրին մեջ կը զգալ, ու կը խելով գա-
նալ իւրաքանչիւ հեշտութեամբ մը զոգտելով աշտեռ:
Իր աշտեռէն աւելի կը անցնալ իր նայած-
ները, զորս կը ծծել բիւրեղովս: Կը անցնալ իր
փայտալները որովհետեւ իսկի պէս կը բուրեղ, ու
զիս կը զնայցնեն, միւսեր իր շարժումները զորս
չստ մեծ ցաւ մը ետքը կը զգալ, ու իր պոստիկ
թերուն գոյութիւնը վզիս շարքը՝ զիս կը
խելնեցնէ :

— Զաւարս ե Անիկա, հեռու տեղ մը մնա-
ցած, իմ սառնաստեղծիս մեջէն ծնած, եւ որ իմ
ցաւերովս կը սնանի:

Սիրով կը կրեմ ցաւերս, որովհետեւ գիտեմ
որ անոցով միայն Անիկայ կուգայ: Աստեղ ան-
գամ յոյզերու ուրիշան մը անցնելու ե, անոր ե-
տեքը զԱյն զնայցնելու հաւար, հորիզոն մը արիւն
խելու ե արեւը ցաւեցնելու հաւար, որպէսզի
զերագոյն զիշտիս մեջ զԱյն զնայցնել, եւ օրախան
վիշտեղէն ետքը տեղեւոր մեջ կեանքիս աշտեռը,

սպասուելը զգարու եւլ յաւարարս՝ փիշիկ մը մի-
այն Անոր մտեղծարար հաւար:

Ան զիս չսիրեր թերեւս. ես անոր գերիս եւլ:

Օր մը սակայն պիտի մտեղծարար Անոր,—ս-
պիկա ինծի պատեղիս գիշերները՝ Իր ներկա-
յութեամբը ինկուած, Իր մտեղծարարութիւնը զաշ-
տեղծարար:

Զ. Յ.

Ճ Ա Մ Ֆ Ո Ւ Ն Ո Ր Թ Ե Ր

Է Ք Ս - Լ Է - Պ Է Ն

Քաղաքը կը տարածուի լեռներու սառ-
րոտը, գեղեցիկ ձորակի մը մէջ, շրջապատուած
կիսագնդաձեւ բլուրներով որկը բարձրանան ամ-
փիթատորնի մը պէս: Քիչ մը հեռուն, կը կանգ-
նին Սալուարի ապառաժուտ շղթաները, հսկայ
եւ անարկու ցցուած քներով, նեղ եւ անապա-
հով կիրճերով, կորսուած յաճախ սպիտակ ամ-
պերու տակ: Շրջանակը, արգասաւոր հողերու
վրայ, մենաւոր վիլլաներ, լուկ եւ զարդա-
րուն փարախներ, ոսկեզօծուած ամառուան
ջերմ արեւին տակ, պաշտօնականուած ծառերու
խիւ փունջերով:

Էքս - Լէ - պէն պիտի կարծուէր պզտիկ
գիւղ մը, այնքան առատ է բուսականութիւնը,
այնքան մաքուր է կլիման, եթէ չուրեմար սա-
տարապայտան գործունէութիւնը զոր գարու-
նէն մինչեւ աշնան սկիզբները, օտարականներ
կը բերին իրենց հետ ամէն տարի: Ամբողջ վեց
ամիսներ, ձմեռուան ինքնամիտի եւ տրտում
թմրութեանէն ետքը, այս հանդարտիկ վայրե-
րը կը փթթին կեանքի պերճ ծաղկումով մը,
կը դառնան դաշտագնացութեան եւ զբօ-
սանքի կեդրոններ, հիւանդներու փրկա-
ւէտ այցելարաններ:

Հողմայեցի կայսրեր եւ իշխաններ, հա-
զարաւոր տարիներ առաջ, հմայուած իր այն-
քան այլազան գեղեցկութեանէն, հմայուած մա-
նաւանդ իր ջերմուկներուն դարմանիչ յատկու-
թիւններէն, կուգային անցնել, գերիներու եւ
սիրուհիներու հետ միասին, ցնծութեան եւ ցո-
փութեան օրեր, ու զօրավար Քանթարիւս կը

կանգնեցնէր յազթական կամար մը եւ տաճարնէր՝ նուիրուած պաշտպան աստուածունիննէրու: Այսօր, այս քաղաքը նորէն կըլլայ արքայական ընտրուած բնակավայր մը, ու աշխարհիս չորս անկիւններէն, մարդիկ կուգան փնտտել իր հրաշալի բնութիւնը, իր անասման միջոցներուն ազատութիւնը:



Բայց էքսպէ-պէնի էն մեծ փառքը, իր բնութեան գերագոյն գեղեցկութիւնը, Պուռժէն է, պզտիկ, կախարդիչ լճակը, ներշնչարան այնքան վսեմ բանաստեղծութիւններու, խոկումներու եւ տրամութեան վայր: Հանդարտ եւ յաւիտենապէս կապոյտ ինչպէս՝ Սավուաի պաշտելի երկիրը զոր կը ցոլացնէ, անիկա ունի անստգիւտ հրապոյրներ, անբայատուրելի գինովութիւններ: Անհասանելի լեռներու ստորոտը, լիզուած՝ ժայռերու գորշ ցցուածքներով, ունի ամայութիւններու հպարտ հողին, ու իր քաղցր մտերմութիւնը պիտի բաւէր լեցնելու ամբողջ գոյութիւն մը, իր մխիթարող պայծառութիւնը պիտի փարատէր կեանքի բոլոր վրդովումները:

Իրիկունները յաճախ լուսնկան աւելի գիւթական կընէ զանի, եւ հազուադիւտ նաւակներ կը սահին իր ծոցին մէջ, մեղմօրէն: Աւելի գգուող կըլլայ եւ աւելի երազագին սարերու գազաթները կը փոխուին հեռաւոր եւ տարտամ ձեւերու, ու կէս մթութեան մէջ, մարդ աւելի կը զգայ առանձնութիւնը, աւելի կը լեցուի բնութիւնով: Ամառուան գիշերները, Լամառթին եկաւ երազել Պուռժէի բուրումնաւէտ եզերքներուն վրայ, ստեղծեց անմահ տաղեր, ու յաճախ նաւակի մը մէջ, գըլուխը հանգչեցուցած իր սիրականին կուրծքին վրայ, մտիկ կընէր իր երգը:

Այսպիս, միշտ մղուած դիպի լոռ եզերքներ,
Յարիսեակակն գիշերին մէջ սարուած ակնկերպարա՞ծ
Պիսի չլրնակ երբեք, սարիներու ոլկիակնին
Միակ օր մը խարսխել:



Պուռժէն քիչ մը հեռուն կը բարձրանայ

հանգարաիկ բլրակ մը, ծաղկազարդ կողերով որ կը կոչուի Լամարթինի անտառ: Մեծ եւ դարեւոր կաղնիներ կը ստուերեն զինքը, եւ անել ուղիներ, փշոտ թուփեր կուտան անոր վայրենութեան հրապոյր մը: Լճակը կը տարածուի իր ստորոտը ու իր գազաթէն այլապէս պաշտելի կերեւայ անիկա: Չորս կողմը կը դիտուին Սավուաի էն գեղեցիկ բնապատկերները: Ատենօք, առատ ու սեղմուած բուսականութիւն մը կը ծածկէր իր հողերը, կուտար աւելի կուտական հմայք մը, եւ շրջադայողները հազուադիւտ էին: Այսօր անհամար քայլեր կը կոխկուտեն զինքը, որսորդներու հրացաններ կարճազանգեն ձորակներուն մէջ, մշակութիւններ կը ծաղկին իր վրայ, ու քաղքենի շքեղ հաստատութիւններ, արքայական անպատկառ զղեակներ կը պղծեն իր առանձնութիւնը:

Աջ կողմը, Բըթի-Բօթի ճամբուն վրայ, պտղատու պարտէզներու մէջ, զառիվեր կը բարձրանայ հինցած ու համեստ տնակ մը: Ամբողջ տարին գոց կը մնան դուռը եւ պատուհանները: Ժամանակը շուտով աղտոտած է անոր ճերմակ գոյնը, ու կիրի ճեղքուածքներու մէջէն, մամուռը կոլորէ իր նուրբ ճիւղերը: Անձրեւին ու արեւին տակ, մաշած է անոր տանիքը ու խորշիկներու մէջ կը տեսնուին թռչուններու բոյներ: Անմիջապէս քովը կը գտնուի երկրագործներու պզտիկ խրճիթ մը որուն առջեւ ստահակներ կը խաղան: Սուգի տպաւորութիւն մըն է որ կը զգացուի այդ տունէն, եւ անցորդները, յաճախ կանգ առնելով լքուած սեմին առջեւ, կը հարցաքննեն զիրար:

Այդ տունին մէջ բնակեցաւ Լամառթին: Երկայն տարիներ, անտառը եղաւ իր սիրելի շրջազավայրը ու անոր մէջ պտտցուց իր մեծութեան ծարաւի հողին: Կանաչութեան այս պզտիկ անկիւնը կը բաւէր իրեն, ու թերեւս անոր կը պարտի, ինչ որ իր անասման գործին մէջ, սքանչացումով կը համակէ մեղի: Մրափեց եղեւիններու շուքին տակ, ու անքուն անցուցած գիշերներու մէջ, երազեց Ռաֆաէլին, իր պաշտելի կրացիէլլային . . . : Տեղացի մարդիկ յոխորտանքով պատմեցին ինծի ասոնք, ըսին ինծի ազուր աւանդութիւններ

մեծ բանաստեղծին վրայ եւ զորս պիտի ուզեմ շարագրել օր մը:

Պղախի բլրակը որ պատասպարեց իր ծոցին մէջ յաւիտենապէս անմահ պուէտը, օրօրեց անոր խռովումները եւ ազնիւ փառասիրութիւնները՝ աւելի զեղեցիկ երեւցաւ աչքիս: Լամանթինի կատաղի եւ գորովալից էութիւնը կարծես բան մը հաղորդած էր իր վեհութեթեանէն ալ վայրերուն, զարդարած էր զանոնք աւելի տրտմութիւնով, աւելի հպարտութիւնով: Իմ այցելութիւններս նմանեցան սրտազին ուխտադնացութիւններու, ու աւելի սրտիս մօտիկ երեւցաւ այս մեծ, այս մաքուր ու սգնուական դէմքը:

* *

Էքսի անգործութեան, գբօսանքի եւ երազանքի կեանքին քով կայ միանգամայն ցաւերու եւ յուսահատութեան մթնոլորտ մը: Յաճախ, նուազած գոյութիւններու տեսքը կը թունաւորէ ապրելու հրճուանքը, ու սիրտը անկարող կըլայ հաշտեցնելու այս տրտում հակադրութիւնը: Բազմիքին լայն սրահին մէջ հիւանդները, հանգչած յարդէ նստարաններու վրայ, կը համբերեն իրենց կարգին: Պաշտօնեաները կը շտապեն տենդոտ շարժումներով պատրաստելու խցիկները, կը հսկեն ճշգրտահութեան, կը կոչեն սպասաւորները: Բժիշկներ գլուխ դիւսի տուած յաճախորդներու հետ, կը վստահեցնեն զանոնք, կը խոստանան զարմանումը: Ամէն հասակէ մարդիկ կան, ծերեր մանաւանդ, եկած փնտռելու կեանքի պղտիկ երկարում մը, ուզելով յամառիլ մահուան դէմ: Դողդոջուն մարմիններով անգամալոյծներ, կազեր, յօդացաւէ տառապողներ:

Ատոնք թեթեւ հիւանդներ են, ընդհանրապէս բուժելի, ու իրենց ներկայութիւնը գրեթէ անտարբեր կանցնի: Բայց երբեմն աչքերու առջեւ կը պարզուին ահռելի վարակումներու տեսարաններ: Արիւնի եւ վէրքերու անդիմադրելի տեսքեր են, յուսահատական ախտերու աւերներ, տձեւուած կմախքներ: Յաւազինօրէն վալարում բերաններ են, ստրնգովան շրթունքներ, եւ աչքեր մանաւանդ, որոնց անահաման տրտմութիւնը կը ջլատէ

ու կընկճէ մարդը: Առաւօտուն շատ կանուխ կուգան ասոնք, ուզելով աննշմարելի անցնել իրենց հէգ մարմինները, վախնալով օտարին արգահատանդէն:

Ես գիտեմ անոնցմէ մէկը որուն անմուռանալի յիշատակը պիտի պահեմ ամբողջ կեանքիս մէջ: Ես անգամներ կը պատահէի իրեն ու իր մեծ գթբաղդութիւնը զիս գրաւեց:

Երիտասարդ Գերմանուհի մըն էր որ կուգար լուսցուիլ ծծումբի ջուրերով: Սպասաւորներ կը տանէին զինքը ծածկուած գահաւորակով մը: Սեւեր կը հագնէր միշտ, յարդէ պարզ գլխարկով մը՝ զլիտուն վրայ: Երկայն զեղեցիկ հասակ մը ունէր, պաշտելիօրէն ներդաշնակ մարմին մը, նուրբ եւ աղնուական ձեւքեր: Բայց ահռելի հիւանդութիւն մը աւերած էր իր դէմքը. այտերը փոստուած էին վէրքերով, շրթունքները հեռացած իրարմէ եւ ցուցնելով ծամածոտած բերան մը ուր ակոսները կը պահէին: Երբեմնի խարտեաչ եւ աղւոր մազերէն կը մնային հագուազիւտ թեկեր միայն, գրեթէ ճաղատ գանկի մը վրայ: Ահռելի չարիքը կը խնայեր Քրիտոյն անոր երկու խորունկ եւ կապոյտ աչքերը, հրաչքով մը փրկուած, եւ որոնց սքանչելի վճիռութիւնը կը բաւէր վայրկեան մը մոռցնելու սոսկումի առաջին սպաւորութիւնը:

Ինչ անմխիթարելի վիշտ պէտք էր տառապեցնել այս հէգ աղջիկը: Մտքիս առջեւ կը ջանայի ասեղծել իր կեանքը, կը ջանայի մտնել անոր մտերմութիւններուն մէջ: Գրեթէ ակամայ եւ երկիւղած հետաքրքրութիւնով մը կուզէի հասկնալ անոր թաքուն հոգերը: Ինծի լսին թէ վեց ամիսներ առաջ, անոր հրաշալի զեղեցկութիւնը դէպի իրեն կը բարձրացնէր բոլոր գլուխները ու կարօտազին նայուածքներ կը հետեւէին իրեն, հմայուած իր քսան տարիներու թարմութիւնովը: Կէս տարուան մէջ այլ եւս ոչինչ կը մնար անկից, բայց միայն վերջնական աւերում, Դիպուածին սարսափելի հեղնութիւնը . . . :

Ինծի ըսին նաեւ, ու ասիկա զիս ցընցեց երկայն սարսուռով մը, թէ նշանուած էր մանկութեանէն ի վեր հայրենակից երիտասարդի մը: Հիմա ալ ամէն բան կը խզուէր . . . Մէրը չէր կրնար ծնիլ այս մարմինէն ուսկից Մահը

հպանցած էր, ու անոր երբեմնի հպարտութիւնը կը խոնարհէր եղբայրական գորովնուրու տռջեւ . . . :

Յաճախ իմ մէջս զգացի ցաւագին փափաքը համբուրելու այդ աչքերը, սրտիս վրայ սեղմելու այդ վիրաւոր գլուխը . . . խեղճ, խեղճ աղջիկ, թերեւս նուազ դժբաղդ պիտի ըլլայիր եթէ Մահը տանէր քեզի, որովհետեւ պիտի չճանչնայիր Գթութիւնը, ահա՛ լի Գթութիւնը:

ԼԵՒՈՆ ԱՐՍԷՆԵԱՆ

ԽՈՆՈՏ ՍԷՐ

Իմ սերս ջիւջ առուակ մըն է որ յաշիկ կը ասնի խոտերուն ցակեմ, ընդարձակ դաշտին մեջ:

Այնչափ յաշիկ որ ոչ իսկ իր դոյնները կը յառի, եւ Դուն որ քանի մը քայլ անդին կը սրտսիս՝ անոր գոյութիւնը չես զիտեր:

Կը տեսնուի որ տղա քերտ քայտերդ դիպուածաւ հոն քերտն քերտ անոր սրտը ջուրերուն մեջ ոտակերդ յանկարծ քրջիկ, քանի որ անկիս, բնութեան իր նախնայն գծուած, չպիտի կրնայ գալ ու քո ոտներդ հաւքարեր:

ՎԱՀԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ

ՇԱՐԺՈՒՆ ԿԷՏԵՐ

Երկար ու բարակ, երկա՛ր՝ որչափ ազահովաբար իրաւունք չունէր ըլլալու՝ աստիկա ինքն իսկ գիտնալով, տձեւնալով անվերջ երկրագործեան ապուշ ու վախկոտ հակումով մը, — ահա ինչպէս առջեւս կուգայ Իզմիրի ալիքերուն էն փաշիկը, էն շնորհալի բանաստեղծը իր գրական ճակատի օրերուն:

Գլանաձեւ վերարկու մը տարտամ գոյնով ու ազոտոտ որչափ ներելի չէր նոյն իսկ սկսնակ պուէտի մը, կը գրկէր անոր ցաւագին հասակը իւրոտ խանդաղատանքով մը: Գեղջուկի անսահման ոտքեր, գիւցաղներգական ոտքեր, զորս անգամ մը տեսնելէ ետքը անկա-

րելի էր մտնալ: Այնպէս չէ, ով Իզմիրի քոյրերս, դուք որ հիմա իր փառքին պատկումին հասած կը տեսնէք զինք, ճամբաներուն բերանը, ու պարասարհներու լուսեղէն գինովութեանը մէջ. կրցա՞ք երբեք մտնալ այդ զոյգ մը ոտքերը, եթէ տեսաք զանոնք . . . եւ արդէն կարելի՞ է զանոնք չտեսնել:

Կիսատ նախադասութիւններով, շարժումի զանգաղութեամբը եզերուն, որոնց աչքերուն մէջ կը ծանրանայ ամառուան ցորենի արաւերուն արեւոտ ու ծոյլ երազանքը, սնահարկի ամչկոտութիւններով, — այդ անտեսուած հանճարի օրերուն — որոնք աւելի կը ծռէին իր հասակին կորութիւնը, իր խոնարհ նայուածքին մէջ ջանալով սքոզել ներքին համոզումը փառքի ու յաղթանակներու տիեզերքի մը, կեղծաւոր՝ ինչպէս միայն գեղջուկները կրնան ըլլալ, կոչոտ, ու սանքիւնաւոր, ու վաւաչոտ միանգամայն, ու լալու անխոնջ մարմալէ մը բռնուած, — ահա տպաւորութիւնը զոր ունեցայ առաջին անգամ երբ Հայրենիքի տպարանը ներկայացաւ զինուած իր բանաստեղծութիւններուն ոսկի հատորովը զոր թերթին խմբագրին կը նուիրէր:

Հակառակ իր ազոտոտ կերպարանքին ու ճախաւէր շարժումներուն, կարծելով տեսնել իր մէջ ամչկոտ ու միամիտ բանաստեղծի հոգի մը ուր բոյն դրած էր անդամանելի ցաւը իր մօրը կորուստին, արգահատանքի պէս բան մը ունեցայ իրեն համար:

Գաւառի մը խորէն Պօլիս նետուած էր աղքատ ու անպաշտպան, դասատուութեամբ ապրելու յոյսով: Ու Գատըգիւղ կրցած էր քանի մը դաս գտնել, իր պաշտօնակիցներէն աւելի տգէտ ըլլալ անկարելի ըլլալով: Շատ իրիկուններ ճամբան հանդիպելով իրեն տունս կը տանէի զինքը, ու հաճոյք մը ըրի ինքզինքիս զանիկա կերակրել երբեմն ու կերպով մը պաշտպանել զինք: Կամաց կամաց սկսայ ազպատանք մը ունենալ իրեն համար, ստիպւելցայ վարժուիլ իր ցաւերուն պատմութեանը որ միշտ կը սկսէր ու կը վերջանար իր մօրը բնական մահուամբը: Ժամերով կը խօսէինք իրեն հետ գրականութեան վրայ, ու իմ միամիտ խանդաղատումիս մէջ կը հիանայի երբ Պայրնէն տողեր կըսէր ինձի, Պայրնէն զոր այնչափ կարգացած կը թուէր որ ալ զանիկա

իր մէջը կը զգար, իր անդունդի ձայներովը, իր ուկիւնոսի հոգիովը:

Բայց ճաշէն յետոյ՝ այս բարեկամը որուն ոտքերը գերմարդկային ճիւղերով կաշխատէի մոռնալ, եւ որուն հասակին կոր ու վիրաւորիչ երկայնութիւնը անհանգիստ կընէր զիս խղճի խայթի մը պէս, այս բարեկամը որ ամբողջ Մեղամաղձութիւնը կը թուէր ինձի, ճաշէն ետքը ա՛լ անկարող կը զգար խօսելու:

Հիմա կը յիշեմ որ անբարգաւոր ռուսող մըն էր այս մեղամաղձիկ պուէտը, եւ տիրական պէտքը կը զգար առատ յագեցումէ մը վերջը թմրելու, քնանալու:

— Յորեք, աչքերդ կը գոցուին կոր:

— Չէ՛, եղբայր, չեմ քնանար կոր:

— Նայէ՛, ինչ հոյակապ հատուած մըն է սա... ու բնթերցումս կընդհատուէր քնարերգական խորհումէ մը որ կը պոթկար իր բերնէն — լայնարաց՝ անդունդի մը պէս որուն վրայ կը թեւէր ոսկի ու նուրբ թրթռումը մծիկներու օրքէսդոի մը:

Ու ծանր ու վեհափառ առջեւս կերկննային, կերկննային հանդիսաւոր դանդաղութեամբ մը իր անմոռանալի ոտքերը:

— Տէ՛, Յորեք, մի քնանար:

Ու Յորեք իր չրթունքներուն վայրագ բացուածքէն, իր չրթունքներուն որ կը յամառէին չմտնալ իրարու, կը մռտար:

— Աման, եղբայր... սպաննէ՛ զիս, բայց թող որ քնանամ:

Ու Յորեքին բերանը կը լայննար, կը լայննար:

Իմ յուսահատական ճիգերուս մէջ զինքը արթուն պահելու ամէն միջոց գործածեցի, ի դուր: Այն ատեն երեւակայութեանս մէկ խոյանքին մէջ գաղափարը ունեցայ իր այնչափ պատմուած ու լացուած մօրը խօսքը ընելու իրեն:

— Յորե՛ք, մայրի՛կդ, ըսի, մի՛ քնանար Յորեք, խեղճ բարի մայրիկդ որ մեռած է...

Այս խօսքերուս շարունակելով հանդերձ խորդալ, Յորեքին աչքերը արցունքոտեցան:

Յորեքին աչքերը կը քնանային ու կուլային:

Զգացի որ ալ ճար չկար զինքը արթուն պահելու: Դիմացս լայն բազմոցին վրայ տարածուած, ան կը շարունակէր խորդալ,

հետզհետէ աւելցող համոզումով մը որուն առջեւ տեղի տուի: Իրեն նայած ատենս սակայն երկու կէտեր մէկէն ուշադրութիւնս գրաւեցին իր վզին տարտամ ճերմակութեանը վրայ: Յոսկումով անոնց կը նայէի, երկու կէտերը կը շարժէին, կը մօտենային ու իրարու քով դադար առին: Հին ծանօթներ, մտածեցի, գոհ այդ հանդիպումէն ամենօրուան այդ արգաւանդ ճամբուն վրայ: Անձկութեամբ իրեն կը նայէի, սպասելով որ ցատկէր տեղէն: Բայց ան չէր երերար, ու սարսափիս տեսակ մը հիացում խառնուեցաւ այն անվրդով ու արհամարհոտ խաղաղութեան համար զոր այդ զոյգ մը լիբբ դաճածները չկրցան խանդարել:

Գիրքս մէկզի նետած այլեւս զինքը կը դիտէի: Վայրկեան մը նողկանք զգացի իրմէ: Ատիկա երբէք մտքէս չէր անցած: Այս մտատանջութեան մէջ՝ տեսայ երրորդ կէտ մը, ապահովաբար ըմբիշ մը իր ցեղակիցներուն մէջ, որ օգոստափառ հանդարտութեամբ մը կիջնէր իր օձիքէն վար:

Այս անգամ դարչանքիս իրական ցամբ աւելցաւ, — մօրս յուսահատութիւնը հետեւեալ օր, եթէ սենեակին մէջ պատահէր իմ բարեկամիս մանրադիտական մտերիմներէն մէկուն:

Իրաւունք ունէի վախնալու: Յաջորդ օրը մայրս սախպուեցաւ սենեակին մէջ կրակի տալ ամէն բան ու ես խօսք սուր ալ տուն չբերել զինքը: Միեւնոյն ատեն բարեկամներու հետ դաւակցեցանք բաղնիք մը տանիլ Յորեքը ու մաքրել զինքը բոլոր այն երկրորդական կեանքերէն որոնց համար այնչափ ներող դանուած էր:

Այս ատեններս էր որ Յորեք անակնկալ սիրոյ մը նուէրը ընդունեցաւ, աղջկան մը կողմանէ, բանաստեղծուհի մը ինքն ալ, եւ այս երկու հոգիներուն մէջ վերակաւ էլօրի ու Ապէլսուրի պատմութիւնը:

Ալ Յորեքը շատ քիչ անգամ կը տեսնէի: Բայց օր մը առատ փղձկումով մը բացաւ ինձի իր սիրտը: Յաւագին տարիանքի դրուսդ ժր եղաւ իմ պատուական բարեկամիս կեանքի այս շրջանը: Իրենց համբոյրները ճանչցան՝ անպատում քաղցրութիւնը յուսահատ խանդազասանքներուն: Աչքերնին դոց ու գինով խելայեղ գիրկընդխառնումներու մէջ մին կը կարծէր կոյս երկինքը գրկել, երանաւէտ մոռա-

ցումի Լեթէն, իսկ միւսը ովկիանը — Պաւլընին մէջ:

Օր մը մեծ սիրահար պուէտը իր սիրուկանին առջեւ սովորականին համեմատ ժամ մը լալէ յետոյ, աստենէ մը ի վեր մոռցուած մայր, յիշեց, ու հեծկլաանքի երկրորդ ժամ մը վերսկսաւ, որ սա վսեմ խօսքը ըսել տուաւ իրեն:

— Եթէ մայրս ողջ ըլլար ի՞նչ պիտի ըսէր:

Այս ազնուական ու յուսահատ սիրտը բանաստեղծութիւնը ապրեցան մինչեւ այն օրը ուր Յորերը Պանտրմու մեկնեցաւ դասատուութիւն ընելու տեղոյն ազգային գալրոցին մէջ:

Վերջին գիշերը երբ, ինչպէս սովոր էին, նորէն դացին ծովեզրը նստած ալիքներուն մոտիկ ընելու ու դիտելու փալիւրուն ու խուսափուկ արծաթի փրփուրները թաւշէ մութին մէջ, էլօրից տրտում մատներով իր ազուր սեւ մազերէն փունջ մը տուաւ իր սիրականին:

Ու Ապէլառ ալ պզտիկ արծաթ սուսի մը մէջ քիչ մը իր մազերէն կտրեց տուաւ յուզուած ծովուն գիմացը: Այդ իրիկունը իրենց ոտքերուն առջեւ, Յորերին ոտքերուն առջեւ մանաւանդ, ալիքները տարօրինակ մը մունջներով իրար համբուրեցին երկար, տարփոտ համբոյրներով:

Այն օրէն ի վեր Մէօհիւրասարի վրայ խեղճ ազջիկը ամէն իրիկուն մութ ծովին ձայներուն կը խառնէ իր տրտում երազանքները ու երբեմն բանալով արծաթ տուփը, գուր գուրանքով կը նայի մազի թելերուն մէջ խլրտող պզտիկ կէտի մը, — խորունկ խորհրդաբան զօր չկրնար բացատրել:

ՇԱՅԼՕԲ

ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Դողացող յոյսին սակ շապտերեւուն,
Սառած մայրիկ վրայ, կը ֆայե խոհուն:

Այքը կը փայլի երբոր հեռուէն
Կը տեսնէ մարդ մ'որ կուգայ դիպ' իրեն:

Կ'անցնի այն մարդն ալ. գրուիլ կ'իյնայ
Աւելի իմուր իր կործման վրայ:

... Ուսին վրային մեկուն կը նայի,
Կը ժպտի անոր ժրպիս մ'հիսանդի:

Թեքը կ'երկնցնէ մեջքի մը անտես,
Շրթներն կը նետն հաւքոյր մը հրակիգ:

... Կը դիտէ հեռուն, սրտն մը կը խոկայ
Ու կը մտնեցի «Դիտել, չպիտի՛ գայ»:

Դողացող յոյսին սակ շապտերեւուն,
Սառած մայրիկ վրայ, կը ֆայե խոհուն:

ՎԱՅԱՆ ՏԻՐԱՆԵԱՆ

ԱՆՕԿՈՒՏ ԶԴՕՈՒՄՆԵՐ

Կրեւայի գայն սիրել իր աչքերուն հաւար աղոր,
Սեք սեւ աչքերուն շիրուքիւնով վարագուռուած,
Երբ ինծի կը նայեր, մուր հուրեանքս մեջ պղտոր
Վրճիս երազի նայուածքներով քափառուած:

Կրեւայի գայն սիրել իր աչքերուն հաւար աղոր:

Ինքնաշիջուան ձայնը եկաւ սեւցրեց
Յոյսի անանջը սքիար
Որ հոգիս աղտոյնքեան մեջ անեղ
Փայլերս մօտ պրպրար:

«Երազին հետ հանդարտ ձրգի այդ աղջիկը դաշխանար
Մի պղտոր աչքիս փայլը զարշեյի եսիդ հաւար.
Ճանքադ մուր է. քեզ ի՞նչ օգուտ փայլիկեանական

[այդ յոյսեմ,

Հանդարտ ձրգի այդ աղջիկը, քեզի անոր փոխարեն

Չգայտիւնը կուսաւ եւ քանկազին,
Ներքին սարսուռը հուժկու
Երջանկութեան երազըդ դուն կ'աւելոյն
Արիւնսած ըլլարս »:

Ձայնը ներսս եր անլիճեյի բունաւոր
Հրասրտիս մեջ անբաւ
Օգուտ չըրիս սեւ աչքերն աղաչաւոր,
Ձայնը շարով հեռացաւ . . . :

Կրեւայի գայն սիրել իր աչքերուն հաւար աղոր,
Սեք սեւ աչքերուն շիրուքիւնով վարագուռուած,
Երբ ինծի կը նայեր, մուր հուրեանքս մեջ պղտոր
Վրճիս երազի նայուածքներով քափառուած:

Կրեւայի գայն սիրել իր աչքերուն հաւար աղոր:

ԱՐՏԱՒԱԶԴ

ՎԱՂՈՒԱՆ ԶԱՅՆԸ կը հրատարակուի ամէն ամսոյ 15 ին: Բաժանորդագրիւնն է ամեն տեղի հաւար տարեկան 5 շիլին կանխիկ:

Նամակ կամ բաժնեգին զրկել ան՝

S. BARTEVIAN,
21, BRIGHTON ST., OXFORD RD.,
(England.) MANCHESTER.